# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

**ք. Երևան**

**Մեկնարկ՝ «08» «հոկտեմբերի» 2025թ.**
**Ժամը՝ 11:00**
**Ավարտ՝ «15» «հոկտեմբերի» 2025թ.**
**Ժամը՝ 09:30**

***Մասնակցում էին՝***
***Հանձնաժողովի նախագահ՝***

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախարարի տեղակալ (**ԳՊ/ԳԱՊ**) — Ասատուր Վարդանյան

***Հանձնաժողովի անդամներ՝***

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժնի պետ (ԳՊ/ԳԱ) — Սեդա Հակոբյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ (ԳՊ/ԳԱ) — Կարեն Գասպարյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (ԳՊ/ԲԱ) — Աննա Ավագյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆինանսական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ) — Սիրանուշ Չթեյան

***Հանձնաժողովի քարտուղար՝***

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ՝ (ԳՊ/ՄՀՄ) — Անի Բաղալյան

**«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը**

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնման առարկայի բնութագրի վերաբերյալ:
2. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
3. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխանության, տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:
4. Տեղեկություն՝ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին:
5. Տվյալներ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

6. Տվյալներ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների մասին:
7. Տվյալներ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակցի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին:
8. Տվյալներ՝ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակցի որոշման վերաբերյալ:
9. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:
10. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0***

**1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնման առարկայի բնութագրի վերաբերյալ**

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար՝ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության զեկույցի կազմման ծառայությունների ձեռքբերումը

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | **Հայաստանի Հանրապետության 2023-2024թթ. ԱՃԹՆ/EITI-ի զեկույցի կազմման ծառայություն** | **20 000 000** |

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0***

**2. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ**

2.1 «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են սահմանված ժամկետում:
2.2 «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հասցե/ՀՎՀՀ | Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|
| 1 | «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ների կոնսորցիում | ՀՀ, ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող.,9 շենք /ՀՎՀՀ 00120086/<br>ՀՀ, ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող.,9 շենք /ՀՎՀՀ 00040569/ | gta@am.gt.com |

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:***

**3. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխանության, տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

3.1 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

3.2 Մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթում առկա էր անհամապատասխանություն Հավելված 1.1-ում:

**Հանձնաժողովը որոշեց՝**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ 08.10.2025թ-ին ընթացակարգը կասեցնել և առաջարկել մասնակցին ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

**10.10.2025 թվականին, ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:**

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:***

**4. Տեղեկություն՝ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին**

4.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում տրվել է համապատասխան շտկումը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

**5. Տեղեկություն՝ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնման ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների առաջարկած գների մասին**

5.1 Ընթացակարգի հրավերի պայմաններին բավարարող և բավարար գնահատված գնային առաջարկ է ներկայացվել հետևյալ մասնակցի կողմից՝

**Չափաբաժին 1**

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր |
|---|---|---|---|---|
| 1 | «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ների կոնսորցիում | 16 200 000 | 3 240 000 | 19 440 000 |

5.2 Մասնակցի հայտի հաշվարկման ճշգրտությունը (տառերով; հայտում ներկայացված հայտի համարներին արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը համապատասխանում է (ճիշտ է):

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:***

**6. Տեղեկություն՝ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների մասին**

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 2025 թվականի հոկտեմբերի 15-ին ժամը 09:30-ին «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ»

ՓԲԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ների կոնսորցիումին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան 0010, Կառավարական տուն 3 հասցեում:

**15.10.2025 թվականին, ժամը 09:30–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:**

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:***

**7. Տեղեկություն՝ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակցի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին**

7.1 Կազմակերպված բանակցություններին մասնակիցն ապահովեց իր մասնակցությունը և ներկայացրեց նոր վերանայված գնային առաջարկ:

**Չափաբաժին 1**

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր |
|---|---|---|---|---|
| 1 | «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ների կոնսորցիում | 16 000 000 | 3 200 000 | 19 200 000 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:***

**8. Տվյալներ՝ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակիցների որոշման վերաբերյալ**

8.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲ և «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունների կոնսորցիումին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:***

**9. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին**

9.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

9.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ ներկայացվել է հարցում 07.10.2025 թվականին:

9.3 Ի պատասխան ստացված պարզաբանման, գնահատող հանձնաժողովը 08.10.2025 թվականին որոշեց՝ առաջնորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0***

**10. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (արդյունքների ամփոփման) մասին**

---

**«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց.**

10.1 Հաստատել ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-25/41 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը՝ անգործության ժամկետ չի կիրառվում:

10.3 Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲ և «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունների կոնսորցիումին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0***

***Մասնակցում էին՝***

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | **Ասատուր Վարդանյան** | ..... |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | **Սեդա Հակոբյան** | ..... |
| | **Կարեն Գասպարյան** | ..... |
| | **Աննա Ավագյան** | ..... |
| | **Սիրանուշ Չթեյան** | ..... |
| **Քարտուղար՝** | **Անի Բադալյան** | ..... |